

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

20 ապրիլի 2022թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյանի և Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Վիրաբ Կիրակոսյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը: Զեկուցող՝ Ա. Դադայան
2. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի «Որակի ապահովման մշտական հանձնաժողովի» կազմի վերահաստատման հարցը:
3. Ֆարմացիայի ինստիտուտի «Տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի» կազմի վերահաստատման հարցը: Զեկուցող՝ Ս. Վարդապետյան
4. Ընթացիկ հարցեր

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ **ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյանի** և Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ **ք.գ.թ. Վիրաբ Կիրակոսյանի** դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:

Լսեցին՝ Գիտքարտուղար Ա. Դադայանին, ով ներկայացրեց դոցենտի կոչման հավակնորդներ Ս.Հ. Սարգսյանի և Վ.Գ. Կիրակոսյանի անձնական գործերը:

- 1.1. Ա. Դադայանը հաղորդեց, որ Տաթևիկ Սարգսյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոցենտի գիտական կոչման համար ներկայացվող պահանջներին: Ս.Հ. Սարգսյանը դասախոսություն է կարդում «Ընդհանուր հիգիենա» առարկայից, ղեկավարում է ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ս. Սարգսյանը հեղինակ է 19 գիտական հոդվածների որոնցից 2-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Վերջին երեք տարում հրատարակել է 6 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Ելույթ ունեցան՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար **ք.գ.թ. Ա. Վարդապետյանը**, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ **Ա. Հովհաննիսյանը**, դոցենտներ **Ա. Մկրտչյանը**, **Կ. Պետրոսյանը**: Նրանք նշեցին, որ Տաթևիկ Սարգսյանը բացի մանկավարժական գործունեություն ծավալելը հանդիսանում է նաև Ֆարմացիայի ինստիտուտի մրցութային հանձնաժողովի նախագահը, նա բանիմաց գիտնական է, լավ մանկավարժ և արժանի է կրելու դոցենտի կոչում:

- 1.2. Ա. Դադայանը տեղեկացրեց, որ որ դոցենտի կոչման հավակնորդ **Վ.Գ. Կիրակոսյանի** գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը ևս բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոցենտի կոչման համար ներկայացվող պահանջներին: Վ.Գ. Կիրակոսյանը դասախոսություն է կարդում «Դեղանյութերի որակի հետազոտման մեթոդներ», «Դեղարտադրության ստանդարտավորում և GMP համակարգ», «Դեղերի հետազոտման անալիտիկ մեթոդներ-1», «Դեղերի որակի

հսկում» և «Մասնագիտության արդի հիմնախնդիրներ» առարկաներից: Նա ղեկավարում է ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Վ. Կիրակոսյանը հեղինակ է 10 գիտական հոդվածների: Վերջին երեք տարում հրատարակել է 5 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Ելույթ ունեցան՝ Ֆարմաքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը և Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար ք.գ.թ. Ս. Վարդապետյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Վ. Կիրակոսյանը աշխատասեր և պարտաճանաչ անձնավորություն է, լավ մանկավարժ և արժանի է կրելու դոցենտի կոչում:

Որոշեցին՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ ք.գ.թ. Ա. Սկրտչյան, անդամներ՝ ք.գ.թ. Ս. Ափոյան և Է. Մարկոսյան: Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 24 անդամներից 18-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 18 անդամներ: Տարբերակ Հովհաննեսի Սարգսյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 18 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 0 քվեաթերթ: Վիրաբ Գուրգենի Կիրակոսյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 17 անդամ, դեմ՝ 1, անվավեր էր՝ 0 քվեաթերթ: Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Տ.Հ. Սարգսյանին՝ (ԺԵ.00.01- «Դեղագիտություն») և Վ.Գ. Կիրակոսյանին՝ (ԺԵ.00.01- «Դեղագիտություն») դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

2. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի «Որակի ապահովման մշտական հանձնաժողովի» կազմի վերահաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ Ս. Վարդապետյանին, ով հաղորդեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի «Որակի ապահովման մշտական հանձնաժողովի» կազմում անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ երջանակահիշատակ Ռուբեն Հովհաննեսյանի մահվան պատճառով: Նա ներկայացրեց հանձնաժողովի նախկին կազմը.

Նախագահ՝ Բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյան, *Անդամներ՝* ք.գ.թ. Ս. Վարդապետյան, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյան, ք.գ.թ. Հ. Սիմոնյան, մագիստրատուրայի ուսանող Էմմա Մարկոսյան: Քանի որ ներկայումս Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ է հանդիսանում Արմեն Հակոբի Մանուկյանը, Ս. Վարդապետյանը առաջարկեց նրան ներառել հանձնաժողովի կազմում:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր որպես հանձնաժողովի նախագահ առաջարկեցին Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի թեկնածությունը, իսկ անդամներ՝ ք.գ.թ. Ս. Վարդապետյանի, Բ.գ.դ. Արմեն Մանուկյանի, ք.գ.թ. Հ. Սիմոնյանի, մագիստրատուրայի ուսանող Էմմա Մարկոսյանի թեկնածությունները:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի «Որակի ապահովման մշտական հանձնաժողովի» հետևյալ կազմը.

Նախագահ՝ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյան, *Անդամներ՝* ք.գ.թ. Ս. Վարդապետյան, Բ.գ.դ. Արմեն Մանուկյան, ք.գ.թ. Հ. Սիմոնյան, մագիստրատուրայի ուսանող Էմմա Մարկոսյան:

3. Ֆարմացիայի ինստիտուտի «Տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի» կազմի վերահաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ Ս. Վարդապետյանին, ով հաղորդեց, որ անհրաժեշտ է վերահաստատել նաև Ֆարմացիայի ինստիտուտի «Տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի» կազմը, որը ևս նախագահում է Ռուբեն Հովհաննեսյանը, իսկ անդամներն էին կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը և ք.գ.թ. Ա. Մկրտչյանը: Գիտքարտուղար Ա. Դադայանը, որպես հանձնաժողովի նախագահ առաջարկեց ք.գ.թ. Ա. Մկրտչյանի թեկնածությունը, իսկ անդամներ՝ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի և ք.գ.թ. Ա. Գեոլջանյանի թեկնածությունները:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի «Տպագրության համար նախատեսված նյութերի ձևակերպման փորձագիտական հանձնաժողովի» հետևյալ կազմը.

Նախագահ՝ ք.գ.թ. Ա. Մկրտչյան, Անդամներ՝ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյան, ք.գ.թ. Ա. Գեոլջանյան:

4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտքարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ ՀՀ Կառավարության № 437-Ն որոշման համաձայն ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտին հատկացվել է առկա և հեռակա անվճար ուսուցմամբ 2022/2023 ուս. տարվա ասպիրանտուրա ընդունելության 1-ական տեղ:

Որոշեցին՝ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ. , դոցենտ

Ա. Դադայան